ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ-3

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանում 15.06.2011թ.տեղի ունեցած մարզխորհրդի նիստին՝

Մասնակցում էին՝

Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Ս.Միքայելյան ՀՀ ՏԿՆ աշխատակազմի ներկայացուցիչ
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Համայնքների սեփական եկամուտների հավաքագրման, բյուջեների կատարման գործընթացի մասին:
/զեկ.՝մարզպետի տեղակալ Ա.Առաքելյան/
2. Մարզի համայնքներում խմելու ջրի վարակազերծման և բնակչությանը խմելու որակյալ ջրով ապահովելու աշխատանքների մասին:
/զեկ.՝մարզպետի տեղակալ Ա.Առաքելյան/
3. Մարզում իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի, կատարման որակի և պատշաճ վերահսկողության մասին:
/զեկ.՝մարզպետի տեղակալ Ա.Արսենյան/
4. Համայնքների աշխատավարձների և սոցվճարների նախկին պարտքերի մարման մասին:
/զեկ.՝Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն.Գալստյան/
5. ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում «ՀՀ դրոշի մասին», «ՀՀ զինանշանի մասին», «ՀՀ օրհներգի մասին» ՀՀ օրենքներով պետական խորհրդանիշների գործածմանը ներկայացվող պահանջների կիրառման առկա իրավիճակի մասին:
/զեկ.՝ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Հովսեփյան/
6. Մարզի դպրոցականների 2011 թվականի ամառային հանգստի կազմակերպման գործընթացի մասին:

/զեկ.՝ Սոցիալական ապահովության բաժնի գլխ. մասնագետ Ա.Դարբինյան/

7. Մարզի ճանապարհների / միջպետական, հանրապետական, մարզային, համայնքային/ առկա վիճակի և սպասվող վերանորոգումների մասին:

/զեկ.՝ Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ Խ.Ալիյան/

8.22 Արագածոտնի մարզի 2011թ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի առաջին եռամսյակի արդյունքների վերաբերյալ:

/զեկ.՝զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Պ.Նազարյան/

Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

Առաջարկել՝

Համայնքապետերին՝

__Հետևել սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներին,բարձրացնել ցուցանիշները:

__Կատարել խմելաջրի վարակազերծման և քլորացման հետ կապված աշխատանքները,սահմանել ժամանակացույց և պարբերաբար վերահսկել նշված գործընթացը:

__Թարմացնել պետական խորհրդանիշները և դրանք օգտագործել սահմանված կարգով:

__Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ցուցակներում ընդգրկել միայն սոցիալական խմբեր ունեցող երեխաներին

__Յուրաքանչյուր համայնքապետ ինքն է վերահսկելու իր ղեկավարած համայնքում իրականացվող շինարարական աշխատանքների որակը:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ